ՀԱՍՏԱՏՎԵԼ Է 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

02.11.2020 17:20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի նախագահի 29.10.2020 թվականի որոշմամբ հաստատվել է **2020 թվականի աշնան որակավորման քննության ժամանակացույցը:**

Որակավորման քննությունը անցկացվելու է 2020թ. նոյեմբերի 19-ին և 20-ին ՀՀ փաստաբանների պալատում (ք.Երևան, Ջաքյան 7-2):

2020թ. աշնան որակավորման քննությունը կազմակերպվելու և անցկացվելու է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի հավելվածը հանդիսացող **Կարանտինի պայմաններում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգով**:

Որակավորման քննությանը մասնակցող հավակնորդները լուծելու են քննական տոմսում առկա երկու խնդիր, որոնցից մեկը վերաբերելու է Փաստաբանի վարքագծի կանոններին (առաջին բաղադրիչ), իսկ երկրորդը որևէ իրավիճակի՝ ըստ հավակնորդների ընտրած մասնագիտական ուղղվածության (երկրորդ բաղադրիչ):

Որակավորման քննության գնահատումն իրականացվում է **40 (քառասուն)** միավորանոց համակարգով: Որակավորման քննությունը հավակնորդը հանձնած է համարվում քննական տոմսին պատասխանելուց առնվազն **24 (քսանչորս)** միավոր ստանալու դեպքում, և եթե յուրաքանչյուր բաղադրիչի (խնդրի) համար հավակնորդը ստացել է առնվազն **12 (տասներկու)** միավոր:

Քննության ժամանակ հավակնորդին տրամադրվում է դիմակ, քննության համար անհրաժեշտ պարագաներ, խմելու ջուր, ինչպես նաև ապահովվում է հավակնորդների միջև սոցիալական հեռավորությունը:

Ռազմական դրության հետ կապված մարտական գործողություններին մասնակցող հավակնորդների բացակայությունը համարվում է հարգելի և Որակավորման հանձնաժողովը հավակնորդի ներկայանալու դեպքում ողջամիտ ժամկետում նրա համար կազմակերպելու և անցկացնելու է որակավորման քննություն:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })